

ԱՐՏԱԳԱՂԹԻ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ՀԵՏԵՈՐՀՐԴԱՅԻՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ

ԳԱԼՍՏՅԱՆ Մ. Վ.

Ազգային փոքրամասնությունների արտագաղթի միտումները պարզաբանելու նպատակով խնդիր էր դրված բացահայտել, թե նրանց միգրացիոն վարքագծի ձևավորման վրա, բացի սոցիալ-տնտեսական ընդհանուր պատճառներից, ինչ դեր ունեն հայաստանում ձևավորված միջլեռնիկ հարաբերությունները, լեզվի և մշակութային ինքնության պահպանման հարցերը և պատմական հայրենիքի գոյության փաստը¹: Ազգային փոքրամասնությունների արտաքին միգրացիայի ուսումնասիրության տեսական հիմնադրույթների ձևակերպման համար հիմք ընդունվեցին հետևյալ մոտեցումները².

Վարչարարական: Հիմնվում է երկու կարևոր դրույթների վրա. ա) հասարակությունը բաղկացած է առանձին անհատներից, որոնք միմյանց հետ կապված են ընտանեկան, էթնիկ, սոցիալական, համայնքային թույլ կապերով. բ) անհատները ցանկացած ժամանակ քաղաքական որոշումների հիման վրա կարող են վերաբնակեցվել այլ տարածքում, նույնիսկ առանց բռնի տեղահանման: Դրա համար խթան են ծառայում բարոյական, գաղափարախոսական, քաղաքական և տնտեսական միջոցները: Այս մոտեցմամբ չի կարևորվում և բացառվում է մարդկանց միգրացիոն վարքագծի գիտական ուսումնա-

¹ Այդ խնդիրները բացահայտելու համար Հայաստանի 8 մարզերի 13 քաղաքային և 22 գյուղական բնակավայրերի վեց ազգային փոքրամասնությունների՝ եզդիների, ռուսների, ասորիների, հույների, ուկրաինացիների և քրդերի (ազգային փոքրամասնությունների ցանկի համար հիմք են ընդունվել ՀՀ 2001 և 2011թ. մարդահամարի տվյալները) 382 ընտանիքներում 2013 թ. նոյեմբերից-2014թ. ապրիլ իրականացվել են էթնոսոցիոլոգիական հարցումներ: Նկատի ունենալով ՀՀ-ում ազգային փոքրամասնությունների հոծ և ցրիվ բնակվելու հանգամանքը՝ վերադարձած միգրանտների կամ նրանց ընտանիքների բացահայտման նպատակով կիրառվեց նաև «ֆիլտրի» և «ձնակույտի» մեթոդը, որը պայմանավորեց նաև մարզերի և բնակավայրերի ընտրանքի ձևավորման առանձնահատկությունները: Դրանք ապահովում են ներկայացուցչական նյութ նշված ազգային փոքրամասնությունների համար: Ստացված քանակական էթնոսոցիոլոգիական հարցման արդյունքները բովանդակային առումով առավել ամբողջական մեկնաբանելու և ներկայացնելու նպատակով ազգային փոքրամասնություններից ընտրված 20 անհատների հետ իրականացվեցին նաև խորացված, իսկ նրանց 13 ՀԿ-ների ղեկավարների հետ՝ փորձագիտական հարցումներ: Հարցումներից բացի, հետազոտության ընթացքում ազգային փոքրամասնությունների շրջանում իրականացվեցին դիտարկումներ և դաշտային գրառումներ, ուսումնասիրվեցին և վերլուծվեցին վիճակագրական տվյալներ և ոչ պաշտոնական փաստաթղթեր: Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի ֆինանսավորմամբ՝ N13-6 F393 գիտական թեմայի շրջանակում:

²Арутюнян Ю. В., Дробичева Л. М., Сусоколов А. А. Этносоциология, М., 1999, с. 86-93.

սիրությունը: Հետևաբար ուշագրավ է Հայաստանից դուրս ազգային փոքրամասնությունների ազգային պետությունների վարած միգրացիոն քաղաքականությունը. այսինքն՝ վարչարարական վերաբնակեցման այդ մոտեցումը ինչ ազդեցություն է ունեցել Հայաստանից նրանց արտաքին միգրացիոն հոսքերի ձևավորման գործում:

Պոզիտիվիստական: Այն, հիմնվելով դասական տնտեսագիտական տեսության՝ «տնտեսական մարդու» հայեցակարգի վրա, յուրաքանչյուր առանձին անհատի կամ ընտանիքի միգրացիոն վարքագիծը դիտարկում է որպես անհատական ընտրության արդյունք՝ կապված աշխարհագրական, տնտեսական, էկոլոգիական և այլ գործոնների հետ: Որպես միգրացիոն վարքագծի ձևավորման կարևոր հիմք՝ հանդես են գալիս անհատների կամ ընտանիքների շահագրգռվածությունը, դրա շնորհիվ՝ նրանց կենսամակարդակի բարելավումը և եկամուտների բարձրացումը: Պոզիտիվիստները միգրացիոն վարքագծի ձևավորման կարևոր գործոն են համարում ընտանիքի կամ անհատի դիրքի և առաջին հերթին եկամուտների բարձրացման շահագրգռվածությունը: Այս մոտեցմամբ կարևորում ենք ազգային փոքրամասնության միգրացիոն վարքագծի ձևավորման վրա ազդող սոցիալ-տնտեսական և մշակութային, ինչպես նաև միգրացիայի համար նախընտրած երկրների ձգողականության գործոնները, միգրանտների համար գրավիչ առկա հնարավորությունները:

Սոցիոլոգիական մոտեցում: Ըստ այդմ՝ մարդկանց միգրացիոն վարքագծի վրա ազդում է ոչ միայն նրանց անհատական նախապատվությունը, այլև էական են այն սոցիալական խմբերը (նաև էթնիկ), որոնց նրանք պատկանում են, ինչպես նաև այն ռեֆերենտ խմբերը (նաև էթնիկ), որոնց նորմերին նրանք կողմնորոշված են:

Էթնոսոցիոլոգիական: Ազգային փոքրամասնությունների միգրացիայի համար անհրաժեշտ է բացահայտել, թե նրանց սերնդեսերունդ ձևավորված մշակութային առանձնահատկությունները ինչպես են արտացոլվում միգրացիոն վարքագծում, և միգրացիան ինչ ազդեցություն է թողնում էթնիկ կառուցվածքի, ավանդույթների, միջէթնիկ հարաբերությունների վրա: Այսինքն՝ ազգային փոքրամասնությունների շրջանում միգրացիան դիտարկվել է նրանց մշակույթում գերիշխող վարքի կանոնների և արժեքների տեսանկյունից, կարևորվել են սերունդների՝ տեղաշարժերի վերաբերյալ ձևավորված ավանդույթները: Մյուս կողմից կարևորվում են համայնքների սոցիալական կառուցվածքի առանձնահատկությունների դերը նրանց միգրացիոն վարքագծի ձևավորման գործում և ազդեցությունը մշակութային փոփոխությունների վրա:

Հետազոտված 382 ընտանիքներից 162-ը ներգրավված են արտաքին միգրացիոն գործընթացներում: Ըստ ազգային պատկանելության՝ 51.2%-ը՝ եզդիներ են, 16.7%-ը՝ ռուսներ, 11.7%-ը՝ ասորիներ, 6.8%-ը՝ հույներ, 8.6%-ը՝ քրդեր, իսկ 5.0%-ը՝ ուկրաինացիներ:

Աղյուսակ 1

Միգրացիայում ներգրավված ընտանիքների թիվը (%)

Ազգությունը	Եզդի	Ռուս	Ասորի	Հույն	Քուրդ	Ուկրաինացի	Ընդամենը
Ընդամենը	51.2	16.7	11.7	6.8	8.6	5.0	100.0

Հետազոտված ընտանիքներում միգրանտների թիվը կազմել է 254 մարդ, ընդ որում եզդիների միջին թիվը կազմել է 1.7, ռուսներինը՝ 1.4, ասորիներինը՝ 1.8, հույներինը՝ 2, քրդերինը՝ 1.2, իսկ ուկրաինացիներինը՝ 1 մարդ: Ազգային փոքրամասնությունների շրջանում առկա են ընտանիքներ, որոնց 5 անդամները մինչև մեկ և ավելի տարի գտնվում են հանրապետությունից դուրս: Գերակշռում են մեկ և երկու միգրանտ ունեցող ընտանիքները, որոնց տեսակարար կշիռը կազմել է 84%, երեք միգրանտ ունեցողներինը՝ 8%, իսկ չորս միգրանտ ունեցողներինը՝ 3.7%:

Աղյուսակ 2

Ընտանիքում միգրանտների թիվը (%)

Միգրանտների թիվը	Եզդի	Ռուս	Ասորի	Հույն	Քուրդ	Ուկրաինացի	Ընդամենը
1 մարդ	32.1	10.5	6.2	3.7	6.8	4.3	63.6
2 մարդ	8.6	5.6	3.7	0.6	1.9	0.0	20.4
3 մարդ	4.9	0.6	0.6	1.2	0.0	0.6	8.0
4 մարդ	3.1	0.0	0.0	1.2	0.0	0.0	4.3
5 մարդ	2.5	0.0	1.2	0.0	0.0	0.0	3.7
Ընդամենը	51.2	16.7	11.8	6.7	8.7	4.9	100.0

Ըստ աղյուսակ 2-ի՝ միգրանտների ամենամեծ թիվը գրանցվել է եզդիների մոտ. մեկ միգրանտ ունեցողները կազմել են 32.1%, երկուսը՝ 8.6%, երեքը՝ 4.9%, չորսը՝ 3.1%, իսկ հինգը՝ 2.5%: Նշենք, որ չորս միգրանտ ունի հույն

ընտանիքների միայն 1.2 %-ը, իսկ հինգ՝ ասորիների 1.2%-ը: ՀՀ-ում միգրանտների նման բարձր ցուցանիշ ունեցող ընտանիքներում մնացել են միայն տարեցները, իսկ մյուսներն արտագաղթել են: Հետազոտվող ժամանակահատվածում նրանց 91.3%-ը մշտական բնակության կամ աշխատանքի նպատակով գտնվել է հանրապետությունից դուրս, իսկ 8.7%-ը վերադարձել էր:

Աղյուսակ 3

Միգրանտների գտնվելու վայրը (%)

Գտնվելու վայրը	Եզդի	Ռուս	Ասորի	Հույն	Քուրդ	Ուկրաինացի	Ընդամենը
ՀՀ-ից դուրս	49.6	14.2	12.2	5.9	5.5	3.9	91.3
ՀՀ-ում	3.5	1.2	1.6	2.0	0.4	0.0	8.7
Ընդամենը	53.1	15.4	13.8	7.9	5.9	3.9	100.0

Հարցվածների կարծիքով, նրանց 81.9%-ը արդեն երկար տարիներ մշտական բնակության նպատակով արտերկրում է: Այսպես, 38.2%-ը մեկնել է շուրջ 20-25 տարի առաջ, այսինքն՝ 1990- 2000-ական թթ., 37.6%-ը՝ 2008-2012 թթ., իսկ 11.3%-ը՝ վերջին 1-2 տարվա ընթացքում: Ըստ հետազոտության արդյունքների՝ հույների 60.4%-ը, ասորիների 48.2%-ը, ռուսների 43.2%-ը, քուրդերի 43%-ը, եզդիների 37%-ը մեկնել են մինչև 2000 թվականը, իսկ մնացածը՝ դրանից հետո: Նրանց 18.1%-ը աշխատելու նպատակով հանրապետությունից բացակայել է մինչև մեկ տարի և արդեն վերադարձել է, իսկ 81.9 %-ը արտերկիր է մեկնել մշտական բնակության:

Աղյուսակ 4

Միգրանտների՝ արտերկիր մեկնելու նպատակը (%)

Նպատակը	Եզդի	Ռուս	Ասորի	Հույն	Քուրդ	Ուկրաինացի	Ընդամենը
Մշտական բնակության	44.1	13.0	9.8	6.7	4.3	3.9	81.9
Աշխատանքի	9.1	2.0	3.9	1.2	2.0	0.0	18.1

Ընդամենը	53.1	15.0	13.8	7.9	6.3	3.9	100.0
----------	------	------	------	-----	-----	-----	-------

Ըստ հետազոտության արդյունքների՝ ազգային փոքրամասնությունների 75.1%-ը արտագաղթը պատճառաբանում է ընդհանուր առմամբ աշխատանքի բացակայությանը (46.3%-ը՝ աշխատանքի բացակայություն, 5.9%-ը՝ մասնագիտական աշխատանքի բացակայություն, 22.9%-ը՝ ընտանիքը պահելու համար բավարար միջոցներ վաստակելու անհնարինություն):

Աղյուսակ 5

Արտերկիր մեկնելու պատճառները (%)

Պատճառները	Եզդի	Ռուս	Ասորի	Հույն	Քուրդ	Ուկրաինացի	Ընդամենը
Աշխատանքի բացակայություն	23.4	8.0	3.7	3.2	5.9	2.1	46.3
Մասնագիտական աշխատանքի բացակայություն	3.2	1.1	0.0	0.0	1.1	0.5	5.9
Ընտանիք պահելու համար բավարար միջոցներ վաստակելու անհնարինություն	15.4	0.0	1.6	0.0	5.9	0.0	22.9
Երկրի/բնակավայրի զարգացման հեռանկարի բացակայություն	4.3	2.1	0.5	0.0	0.0	0.0	6.9
Մայրենի լեզվի գործածման դժվարություններ	0.0	0.5	0.0	0.0	0.0	0.0	0.5
Ազգային պատկանելության և մարդու իրավունքների հետ կապված խնդիրներ	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0
Հայրենիքում ապրելու ջանկություն	0.0	0.0	0.0	0.5	0.0	0.0	0.5
Աշխարհաքաղաքական անկայուն վիճակ	0.5	0.5	0.0	0.5	0.0	0.0	3.7
Ընտանեկան հանգամանքներ	5.3	2.7	0.0	0.5	0.5	1.1	10.1
Ռուսում	0.0	2.1	0.0	0.0	0.0	1.1	3.2
Ընդամենը	53.2	17.6	5.9	5.3	13.3	4.8	100.0

Համեմատության համար նշենք, որ հայերը արտագաղթի գլխավոր պատճառը նույնպես համարում են աշխատանքի բացակայությունը (2013 թ. դրությամբ՝ 89.7%): Այդ առթիվ «Աթուր» ասորական ասոցիացիայի նախագահը

³ Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, Ե., 2014, էջ 23: <http://www.armstat.am/am/?nid=82&id=1618> (30.03.2013):

նշեց. «Այն ժամանակ արտագաղթի պատճառը պատերազմն էր, բլոկադան և տնտեսական ծանր վիճակը: Գյուղերից երևի թե ամենաշատը արտագաղթել են Կոտայքի մարզի Արզնի համայնքից, Արարատի մարզի Դմիտրով գյուղից, արտագաղթում էին ընտանիքներով: Բայց եթե թվերի վերածենք, հայ ազգը ավելի շատ է արտագաղթել տոկոսային հարաբերությամբ, քան ասորիները: Քանի որ ասորիները հավաք գյուղերում էին բնակվում, նրանք այդքան շուտ չլքեցին իրենց գյուղերը, մինչև այսօր էլ Վերին Դվինում, Նոր Արտագերտում տները մնում են, այսինքն՝ հետադարձի հույս ունեն մարդիկ: Իսկ Արզնին ընենց եղավ, որ մարդիկ տները ծախեցին, գնացին, դա էր ցավալի: Մեծ մարդիկ հիմնականում շատ դժվար են ինտեգրվում Ռուսաստանի միջավայրին: Քանի որ ասորիները ռուսալեզու են, Ռուսաստան են գնում»⁴: Մեջբերենք նաև «Բլիոս» հույների համայնքի ՀԿ-ի նախագահ Ս. Ռաֆայելիդիսի տեսակետը. «Հայաստանից մեկնելու պատճառները միայն սոցիալական են: Մենք այստեղ ամուր կանգնած ենք հողի վրա, ոչ մի հարց չունենք որպես ազգային փոքրամասնություն: Հանդուրժողականությունը Հայաստանում գործում է: Ես ինքս այստեղ ծնվել, մեծացել եմ, և ոչ մեկը չի ասել՝ հույնի երեխա եմ»⁵: Սահմանամերձ բնակավայրերից ազգային փոքրամասնությունների արտագաղթի պատճառը պայմանավորված էր Լեռնային Ղարաբաղի հարցում հայադրբեջանական կոնֆլիկտով: Այսպես, ռուսական համայնքի ներկայացուցիչ Լ. Ռշտունին նշում է Ճամբարակի (Կրասնոսելսկի) մոլոկանների օրինակը: Նրանք ստիպված էին տեղափոխվել, որովհետև քաղաքը ոմբակոծվում էր, ապրելը վտանգավոր էր⁶: Իսկ «Քուրդ մտավորականների խորհուրդ» կազմակերպության ղեկավար Ա. Սարդարյանը նշել է, որ մինչև 2000 թ. Հայաստանից արտագաղթը պայմանավորված էր սոցիալ-տնտեսական պատճառներով, հատկապես նախալեռնային շրջաններում բնակվող քրդերի համար: Նա բերում է Արագածոտնի մարզի քրդաբնակ մի շարք գյուղերի օրինակը, որոնք ունեն ո՛չ բերրի հող, առկա է ոռոգման և խմելու ջրի խնդիր, ինչպես նաև ո՛չ բարեկարգ ճանապարհներ և սոցիալ-մշակութային, առողջապահական հաստատություններ: Ըստ նրա՝ վերջին տարիներին արտագաղթը մեծ չափեր է ընդունել նաև Արարատյան դաշտավայրի քրդաբնակ համայնքներում, որտեղից մեկնում են նաև Գերմանիա և Ֆրանսիա⁷:

⁴ Ա. Միխայելովի հետ հարցազրույցի արդյունքներ, դաշտային ազգագրական նյութեր (ԴԱՆ), Ե. 2013: Նյութերը պահպանվում են ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի էթնոսոցիոլոգիայի բաժնի արխիվում (ՀԱԻ ԷԲԱ):

⁵ Ս. Ռաֆայելիդիսի հետ հարցազրույցի արդյունքներ, Ե., 2013, ԴԱՆ, ՀԱԻ ԷԲԱ:

⁶ Լ. Ռշտունիի հետ հարցազրույցի արդյունքներ, Ե., 2013, ԴԱՆ, ՀԱԻ ԷԲԱ:

⁷ Ա. Սարդարյանի հետ հարցազրույցի արդյունքներ, Ե., 2013, ԴԱՆ, ՀԱԻ ԷԲԱ:

Այն կանխավարկածը, որ Հայաստանից արտամղող գործոնների շարքում կարևոր դեր կարող են ունենալ նաև ազգային մշակույթի պահպանման, մայրենի լեզվի կիրառման, ազգային պատկանելության և մարդու իրավունքների հետ կապված խնդիրները, ինչպես նաև հայրենիքում ապրելու ցանկությունը, հետազոտության արդյունքներով չհիմնավորվեց. դրանց կողմնակիցները թիվը կազմել է ընդամենը 1.0% (աղյուսակ 5): Ներկայացնենք հարցման մասնակիցների մի քանի կարծիք. «Արդեն յոթանասուն տարեկան եմ, մեր գյուղում դեռ չեմ լսել մի դեպք, որ ինչ-որ մեկը իր մայրենի լեզուն չի կարողանում ազատորեն օգտագործել, կամ էլ ազգային պատկանելության պատճառով մեկնել է Հայաստանից: Լեզուն, կրթությունը, ազգությունը չէ պատճառը, որ մեկնում են: Պատճառը սոցիալ-տնտեսական է, աշխատանք չկա, դրա համար էլ մեկնում են: Ազգային խնդիրը այստեղ դեր չի կատարում» (եզդի, տղամարդ, 70 տ.): «Իմ տղան և աղջիկը արդեն 6 տարի ապրում են Ռուսաստանում: Հայերի կողմից ազգային խտրականությունը չէ պատճառը, որ նրանք գյուղից հեռացան: Երկուսն էլ բարձրագույն կրթություն ունեին, բայց աշխատանք չունեին, ստիպված գնացին» (ասորի, կին, 55 տ.): Այնուհանդերձ, ազգային փոքրամասնությունների ՀԿ-ների որոշ ղեկավարների կարծիքով, 1993 թ. «Լեզվի մասին» ՀՀ օրենքի ընդունումը և դրա հապճեպ կիրարկումը ռուսախոս ազգային փոքրամասնությունների շրջանում նպաստել է Հայաստանից արտաքին միգրացիայի թվի աճին: Ըստ այդմ՝ «Պաշտոնական անձինք և սպասարկման առանձին ոլորտներում աշխատող ՀՀ քաղաքացիները պարտավոր են տիրապետել գրական հայերենին»¹⁰: «Ռոսսիյա» ՀԿ-ի ղեկավար Յու. Յակովենկոն նշում է. «Արտագաղթի ամենամեծ հոսքը եղել է 1993 թ., երբ ընդունվեց «Լեզվի մասին» օրենքը, և փակվեցին ռուսական դպրոցները, համալսարանների ռուսական բաժինները: Հուսալքված մարդիկ, չիմանալով, թե ինչպես շարունակել ապրել, արտագաղթում էին: Կարելի է հաղթահարել սոցիալական, կենցաղային դժվարությունները, բայց երբ առաջանում է կրթական խնդիր, այդ ժամանակ արդեն իսկապես իրավիճակը սրվում է, որովհետև բարձրանում է ինքնապահպանման հարցը: Միանգամից ամբողջ կրթական համակարգը հայերենի փոխելը խոհեմ քայլ չէր: Այդ անցումը պետք է կատարվեր աստիճանաբար, և այսօր գուցե ունենայինք ուրիշ պատկեր: Բայց, ցավոք սրտի, այն ժամանակ իշխանությունը լավ գլուխ չհանեց այս ամենից և որոշեց մեկ օրենքով փակել մնացածի թթվածինը: Այսօր ռուսները, որպես այդպիսին, նման նեղվածություն

⁸ Արմավիրի մարզ, գ. Հուշակերտ, 2014, ԴԱՆ, ՀԱԻ ԷԲԱ:

⁹ Արարատի մարզ, Վերին Դվին, 2015, ԴԱՆ, ՀԱԻ ԷԲԱ:

¹⁰ <http://www.alist.am> (19.01.2015):

չեն զգում: Քանի որ կան ռուսական դասարաններ. մեր դպրոցը, որը ամբողջովին համարվում է սլավոնական դպրոց, բայց օրենքը, միևնույն է, շարունակում է լինել: Դրա համար ինչ-որ կերպ հարմարվում ենք այդ օրենքին, չնայած վերջերս շատ են խոսում այն մասին, որ պետք է փոխել այդ օրենքը: ... Միգրացիան, իհարկե, կապված է եղել լեզվական այս գործընթացների հետ: Տնտեսական գործոնը ևս ազդում էր, քանի որ օրենքից հետո շատերը կորցրին իրենց աշխատանքը: Այսօր վիճակը այնպես է, որ մենք՝ ազգային փոքրամասնություններս, ունենք նույն խնդիրները, ինչ որ հայերը: Մենք այս ազգի մի մասն ենք»¹¹: Բացի վերը նշված ընդհանուր պատճառներից, Հայաստանից որոշ ազգային փոքրամասնությունների արտագաղթը պայմանավորված է նաև ազգային առանձնահատուկ գործոններով: Մասնավորապես նկատի ունենք ազգային պետության գոյությունը և միգրացիոն քաղաքականությունը, որը երբեմն այդ գործընթացին հաղորդում է կազմակերպված բնույթ: Հայաստանում բնակվող ազգային փոքրամասնություններից միայն երեքը՝ ռուսները, հույները և ուկրաինացիները, ՀՀ-ից դուրս ունեն իրենց պատմական հայրենիքը և ստանում են որոշակի օգնություն և աջակցություն: Օրինակ, 2000 թ. Հունաստանի խորհրդարանն ընդունեց նախկին ԽՍՀՄ-ից հույն հայրենադարձներին տեղավորելու մասին օրենք. արտասահմանյան հույներին տրվում էր Հունաստանի անձնագիր (այն երկրներում, որտեղ թույլատրված էր երկրադաքացիությունը) կամ անձը հաստատող փաստաթուղթ (երկրներ, որտեղ երկրադաքացիություն նախատեսված չէ սահմանադրությամբ): Այդ օրենքի համաձայն՝ էթնիկ հույները երկրից ազատ տեղաշարժվելու իրավունք ստացան, հնարավորություն տրվեց լեզալ տեղավորվելու աշխատանքի¹²: Հայաստանի հույների «Պատրիդա» կազմակերպության նախագահ Է. Պոլատովը նշում է. «90-ական թթ. սկսած՝ արտագաղթը մեծ չափերի հասավ: Հիմնական արտագաղթը եղել է 1990-1996 թթ.: Պատճառները հայտնի էին, բայց որոշ մասն էլ ուղղակի ուզում էր վերադառնալ պատմական հայրենիք: Հույների մեկնելուն օգնել էին Հունաստանի կառավարությունը և Հայաստանում Հունաստանի դեսպանատունը: Հունաստանը և Կիպրոսը անշահախնդիր օգնում էին ոչ միայն հույներին, այլև հայերին: Եվ ոչ միայն Հայաստանի, նաև Ղարաբաղի հույներին ու հայերին: Ղարաբաղի Մարտակերտի շրջանում կա մի հունաբնակ գյուղ. 1993 թվականին Հունաստանի կառավարությունը այնտեղից ինքնաթիռներով 74 հույնի տեղափոխեց»¹³: Խորացված հարցազրույցներից պարզվեց նաև, որ այդ տարիներ-

¹¹ Յու. Յակովենկոյի հետ հարցազրույցի արդյունքներ, Ե., 2014, ԴԱՆ, ՀԱԻ ԷԲԱ:

¹² [http://mitq.org/print/?l=rus&dir=2&news=829\(27.03.215\)](http://mitq.org/print/?l=rus&dir=2&news=829(27.03.215))

¹³ Է. Պոլատովի հետ հարցազրույցի արդյունքներ, Ե., 2014, ԴԱՆ, ՀԱԻ ԷԲԱ:

րին արտագաղթեցին նաև հայ-հունական ընտանիքներ և նրանց երեխաները, որոնք ունեին կրկնակի էթնիկ ինքնագիտակցություն և Հունաստանը համարում էին իրենց ծնողներից մեկի հայրենիքը: Անշուշտ, այդ երևույթին խթանեց նաև Հայաստանի սոցիալ-տնտեսական իրավիճակը: Հույների որոշ մասն էլ այդ տարիներին մշտական բնակության մեկնեց նաև Ռուսաստանի Դաշնություն:

Ըստ «Ռոսսիյա» ՀԿ-ի ղեկավար Յու. Յակովենկոյի՝ Ղարաբաղյան պատերազմի տարիներին ՌԴ կառավարության անմիջական օգնությամբ և իրենց կազմակերպության աջակցությամբ Տաշիրից երեք ինքնաթիռով ռուսներ (հիմնականում՝ մոլդկաններ) են մեկնել: ՌԴ կառավարությունը Հայաստանում ապրող ռուսներին նաև տվել է մարդասիրական օգնություն: Ներկայումս ՌԴ-ն Հայաստանում իրականացնում է նաև «Հայրենակիցներ» միգրացիոն ծրագիրը. ըստ այդմ՝ մի շարք ընտանիքներ տեղափոխվել են մշտական բնակության: «Ռուսաստանում կյանքի մակարդակը բարձր է, մարդիկ իրենց ավելի ապահով են զգում, թոշակը բարձր է: Իսկ մարդը բնագդաբար այն տեղն է փնտրում, որտեղ իրեն լավ է: Բայց շատերը, որոնց հետ ես նամակագրություն ունեմ, մեծ կարոտով և նոստալգիայով են հիշում Հայաստանը», - նշեց Յու. Յակովենկոն¹⁴: Եզդիների և քրդերի շրջանում լայն տարածում ունի նաև ամուսնական պատճառներով միգրացիան՝ պայմանավորված համայնքի դասային կառուցվածքով և դրանից բխող մի շարք սովորույթներով: Դասային պատկանելությամբ պայմանավորված՝ երբեմն աղջիկը կամ տղան, Հայաստանում չգտնելով համապատասխան կարգավիճակ ունեցող երիտասարդի, ամուսնանում է արտերկրում բնակվող նույն դասին պատկանող հայրենակցի հետ. «Մեր գյուղի մրիդներից մեկը աղջիկ ուներ, բայց գյուղում չկար համապատասխան թեկնածու: Մենք Գերմանիայում եզդիների մեծ համայնք ունենք, որտեղ մեր գյուղից գնացած ընտանիքներ էլ կան: Սյնտեղ ապրող մրիդ ընտանիքներից մեկը եկավ և այդ աղջկան ուզեց իր տղային: Ամուսնացավ, գնաց Գերմանիա» (եզդի, տղամարդ, 64 տ.)¹⁵: Այսպիսով, ազգային երեք փոքրամասնությունների (հույներ, ռուսներ, ուկրաինացիներ) արտաքին միգրացիան պայմանավորված է ոչ միայն Հայաստանում ստեղծված սոցիալ-տնտեսական վիճակով, այլև նրանց ազգային պետության միգրացիոն քաղաքականությամբ: Այդ պետությունների՝ հայրենակիցների միգրացիայի վերաբերյալ վարչարարական որոշումների ընդունմամբ և տարբեր աջակցությունների շնորհիվ հեշտացել է նրանց մուտքը այդ երկրներ: Մյուս կողմից՝ ազգային փոքրամասնությունների շրջանում միգ-

¹⁴ Յու. Յակովենկոյի հետ հարցազրույցի արդյունքներ, Ե., 2014, ԴԱՆ, ՀԱԻ ԷԲԱ:

¹⁵ Արագածոտնի մարզ, գ. Շամիրամ, 2014, ԴԱՆ, ՀԱԻ ԷԲԱ:

րացիոն վարքագծի ձևավորումը կապված է նաև նրանց անհատական որոշումների հետ. հիմքում նրանց կենսամակարդակի բարելավման և եկամուտների բարձրացման մոտիվացիան է: Բնականաբար, այդ հարցում որոշակի դեր է ունեցել նաև պատմական հայրենիքում ապրելու ձգտումը:

Աղյուսակ 6

Միգրանտների մուտքի երկրները (%)

Երկրները	Եզդի	Ռուս	Ասորի	Հույն	Քուրդ	Ուկրաինացի	Ընդամենը
ՌԴ	34.8	15.6	7.4	0.7	5.2	3.7	67.4
ԱՊՀ	3.0	0.7	0.7	0.0	3.0	2.2	9.6
ԱՄՆ	0.0	0.7	0.0	0.0	0.0	0.0	0.7
Եվրոպա	14.8	0.0	0.7	5.2	0.7	0.7	22.2
Ընդամենը	52.6	17.0	8.9	5.9	8.9	6.7	100.0

Հետազոտության արդյունքներով արտերկիր մեկնածուների կազմում գերակշռել է Ռուսաստանի Դաշնությունում գտնվող միգրանտների մասնաբաժինը՝ 67.4%, որից 34.7%-ը՝ եզդի, 15.6%-ը՝ ռուս, 7.4%-ը՝ ասորի, 5.2%-ը՝ քուրդ, իսկ 3.7%-ը՝ ուկրաինացի: Նրանց 22.2%-ը հետազոտվող ժամանակահատվածում գտնվել է եվրոպական երկրներում՝ հիմնականում Ֆրանսիայում, Հունաստանում և Գերմանիայում: Ֆրանսիա և Գերմանիա մեկնողների մեջ բարձր տոկոս են կազմում եզդիները: Միգրանտների 9.6%-ը բնակչություն է հաստատել ԱՊՀ երկրներում՝ հիմնականում Ուկրաինայում և Ղազախստանում: Այսպես, ՌԴ 2010 թ. մարդահամարի տվյալներով, ըստ ազգային պատկանելության, քրդերը կազմել են 23 322 մարդ (ՌԴ բնակչության 0,02%ը), որից քաղաքայինը՝ 40 505, իսկ գյուղականը՝ 19137 մարդ: Առավել խոշոր համայնք քրդերն ունեն Կրասնոդարի երկրամասում՝ 5 899 մարդ: Ըստ նույն մարդահամարի՝ իրեն եզդի է համարել 40 586 մարդ (ՌԴ բնակչության 0,03%ը), որից քաղաքային բնակչությունը՝ 22 452, գյուղականը՝ 18 134 մարդ: Առավել խոշոր

համայնք եզդիներն ունեն Յարոսլավլի մարզում (3287 եզդի), Կրասնոդարի երկրամասում և այլն¹⁶:

Ռուսների հիմնական մասը մեկնել է Ստավրոպոլի և Կրասնոդարի երկրամասեր, ինչպես նաև կենտրոնական մարզեր: Դիմիտրով համայնքից ասորիները հիմնականում արտագաղթել են 1990- 1996 թթ., և ներկայում մոտ 126 ընտանիք արտերկրում է: Նրանք մեկնել են ՌԴ, Ուկրաինա, Գերմանիա, Հոլանդիա, Ֆրանսիա, Ավստրալիա: Հիմնականում բնակվում են Ռոստովում, քանի որ դեռևս 1970-80-ական թթ. այնտեղ մեկնել էին արտագնա աշխատանքի, և նրանց մի մասը հաստատվել էր այնտեղ: Ռոստովում, Կրասնոդարում կան կազմակերպված ասորական մեծ համայնքներ, որոնց ղեկավարները Հայաստանի ասորիներ են: Այդ տարիներին Վերին Դվինից արտագաղթել է մոտ 90 ընտանիք¹⁷: Արզնի գյուղից հիմնականում գնում են Կրասնոդարի երկրամաս, Կրիմսկ քաղաք, որտեղ ներկայում ապրում է մոտ 500 ընտանիք¹⁸: Ազգային փոքրա-մասնությունների արտաքին միգրացիայի ուղղությունների վրա իրենց ազդեցությունն են թողնում նաև էթնիկ սոցիալական ցանցերը՝ նախօրոք այնտեղ բնակություն հաստատած ընտանիքի անդամները, ազգակիցները և բարեկամները: Միգրացիայի այդ միտումները բացասական ազդեցություն են թողնում նրանց քանակի կրճատման և սոցիալ-ժողովրդագրական կազմի վրա: Այսպես, ըստ ազգային վիճակագրական ծառայության տվյալների, 1989 թ.¹⁹ և 2011 թթ. մարդահամարների միջև ընկած ժամանակահատվածում Հայաստանից արտագաղթել են 16 668 եզդի, 40 364 ռուս, 3 194 ասորի, 7 165 ուկրաինացի, 1 989 քուրդ, 3 750 հույն²⁰: Համեմատության համար նշենք, որ այդ տարիներին արտագաղթել են նաև հայերը: 1992-1994 թվականները համարվում են զանգվածային արտահոսքի ժամանակահատված՝ արտագաղթեց 610-620 հազ. մարդ կամ հանրապետության բնակչության գրեթե 1/5-ը²¹, իսկ 1996-2001 թթ.՝ մոտ 250 հազ. մարդ կամ հանրապետության բնակչության մոտ 8%-ը²²: 2001 թ. մարդահամարի տվյալներով հայերը կազմել են 3 145 354 մարդ, որից ազգային

¹⁶Мосаки Н. Кургы и езиды в российской переносу 2010 г., <http://www.regnum.ru/news/society/1488222.html> (20.03.15)

¹⁷Արարատի մարզ Դիմիտրով և Վերին Դվին համայնքների աշխատակազմի ղեկավարների հետ հարցազրույցի արդյունքներ, 2015, ԴԱՆ, ՀԱԻ ԷԲԱ:

¹⁸Կոտայքի մարզի Արզնի համայնքի ղեկավարի հետ հարցազրույցի արդյունքներ, 2015, ԴԱՆ, ՀԱԻ ԷԲԱ:

¹⁹ Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնություններն այսօր I, Ե., 2000:

²⁰ [http://www.armstat.am/am/?nid=337\(30.03.2015\)](http://www.armstat.am/am/?nid=337(30.03.2015))

²¹ Միգրացիան և մարդկային զարգացումը: Հնարավորություններ և մարտահրավերներ, Մարդկային զարգացման ազգային զեկույց, Հայաստան, 2009, էջ 39:

²² Նույն տեղում, էջ 35:

փոքրամասնությունները՝ 67 657 մարդ (2.11%)²³, իսկ 2011 թ. մարդահամարի տվյալներով՝ 3 018 854 մարդ, որից ազգային փոքրամասնությունները՝ 57053 մարդ (1.9%)²⁴: Այսինքն՝ այդ տարիներին հայերի քանակը կրճատվել է 183 553 մարդով, իսկ ազգային փոքրամասնություններինը՝ 10 604-ով: Վիճակագրական տվյալների համաձայն՝ Հայաստանից արտագաղթել են ոչ միայն ազգային փոքրամասնությունները, այլև առավել մեծ թվով հայերը՝ պայմանավորված մեր երկրի տնտեսական և քաղաքական անկայուն իրավիճակով, մասնավորապես տնտեսական ճգնաժամով և գործազրկության բարձր մակարդակով:

ТЕНДЕНЦИИ МИГРАЦИИ СРЕДИ НАЦИОНАЛЬНЫХ МЕНЬШИНСТВ ПОСТСОВЕТСКОЙ АРМЕНИИ

ГАЛСТЯН М. В.

Резюме

Этносоциологическое исследование, проведенное среди представителей шести национальных меньшинств, живущих в РА, показало, что для их миграции вовсе не являются определяющими вопросы сохранения языка и культурной идентичности и стремление обосноваться на исторической родине.

Они полностью интегрированы в наше общество. Как для армян, так и для нацменьшинств основной причиной миграции является нестабильная социально-экономическая ситуация, в частности, отсутствие работы.

MIGRATION TRENDS AMONG NATIONAL MINORITIES OF POST-SOVIET ARMENIA

M. GALSTYAN

Abstract

The ethno-sociological study was conducted among six ethnic minorities of the Republic of Armenia: Yazidi, Russian, Assyrian, Greek, Ukrainian and Kurdish communities. According to the results of the study, the preservation of language, cultural identity, return to the homeland are not decisive factors for migration. Ethnic minorities have high integration level in our country. Likewise to Armenians, the main reason for migration among ethnic minorities are non-stable socio-economic conditions and particularly the unemployment rate.

²³ Հայաստանի Հանրապետության 2001 թ. մարդահամարի (Հայաստանի Հանրապետության ցուցանիշները) արդյունքները, Ե., 2003, էջ 362-363:

²⁴ [http://www.armstat.am/am/?nid=337\(30.03.2015\)](http://www.armstat.am/am/?nid=337(30.03.2015)):